ոմ մարդկեղէնս իմաստութեան : Կա սակս այնորիկ երանի է մեզ, զի այս ամենայն գիտելիք և ուսմունք զանազանեալք յիրերաց՝ յամենայն կողմանս Եւրոպայ դիմեալ բերին 'ի մի վախճան սքանչելի, և այնպիսեաւ համաչունչ միաբանութեամբ՝ որպիսի չերևեցաւ երբեք ուրեք յառաջ քան զմեր ժամանակս :

Քաղաքագէտ ոմն մերոյ ժամանակիս պատմագիր, մեծահամբաւ իշխանն Կիզոյ, յուշ առնէր երբեմն, եթէ քանի բազմածնունդ իցէ Իտալիա սրաթռիչ հանճարովք, որ բուռն թափով խոյանան յասպարէզս տեսական գիտութեանց. բազմածնունդ և այնպիսեաւ, որ 'ի գործնականն բերին հրահանգս մեծապէս գովութեամբ. և զի է, ասէ, զի երկոքումբք մայրացեալ նորա զայսօրինակ, և չվայելէ յարգասիս քաղաքական ինչ օգտից. բայց զի այս կրկնակի գասաւորութիւնք հանճարոյ և գիտութիւ ցանգ տարանջատ կացին անդ 'ի միմեանց, և ցանգ օտարացեալք յիրերաց :

Եւ ահա ժողովք մերոյ ժամանակիս միաբանեն զնոսա : Յաւերժացի յիշատակ այնոցիկ, որք հաստատեցին Յիտալիա օրէնս այսպիսի՝ որ զբաժանեալ եղբարս 'ի մի գումարէ : Ուրախ լիցին բարեացապարտքն այնոքիկ 'ի քաղցրաձաշակն արգասիս բարերարութեան զոր առ ազգ մի ողջոյն գործեցին. ցնծացեն յանշուշտն այն հատուցումն վարձուց, որ ինքնին անգամ բաւական է 'ի սփոփանս սրտի առն, այն իսկ է գիտել՝ եթէ իւրոցն հայրենեաց օգտից ինչ եղև պատճառք :

Կեցցեն յամայր անսասան և անենկուն Իտալական այս ժողովք : Աներկմիտն այն ակնկալութիւն հանապազորդելոյ նոցին, այն միայն է որ կարող իցէ դիւրել փոքր մի ճշմարիտցաւոց ամենեցուն որ շուրջ զնովաս կան՝ սակս մեծալուտ բաժանման մերոյ յիրերաց : Յասել անդ զողջոյն հրաժեշտին, և 'ի տալ անդ միմեանց զաջ խաղաղութեան, և 'ի նշանակ սիրոյն որ զսիրտս 'ի մի ձուլեաց՝ թող այր իւրաքանչիւր կրկին և երեքկին խոստումն ընկալցի առ 'ի վերսին տեսանելոյ զմիմեանս :

Ի գեղաղէշն Թոսքանա, որ երկիցս անգամ խանձարուրք քաղաքականութեան եկաց, և նախ առաջին իտալական ժողովոց, յայնմ Ֆի ուր գաշնակագոյնս հնչէ նախանձելին այն բարբառ[1], ուրանօր Թուի իմն եթէ Ցանթեայ ոգին ձայն յարութեան կարդայցէ ազգաց վաղամեռիկ եղելոց, և կենսատու լինիցի անիսօս յիշատակաց, և մարմին իմն զգեցուցանիցէ անցելոցն վիպաց. ուրանօր Գալիլէոս միւս անգամ եառ Ֆի, եթէ օրէն իցէ այսպէս ասել, զիւրն շարժումն, և զնոյն շարժումն ազգեաց յիմաստս ամենեցուն. յայնմ Ֆի, ուր գեղաձիծաղն երկին և բարեբերն երկիր և արուեստք հիացականք ընկղմեն զոգի 'ի վայելս գեղեցկութեան բնութեան. անդ եռանդագին սէր ճշմարտութեան դարձեալ 'ի մի զոգեսցէ զմիտս և զսիրտս իմաստասիրաց Իտալոյ :

Այն քաղաք Էտրուրական[2], որ օթարան ասպնջականութեան պատրաստէ վասն ձեր, իւրովքն խիտ առ խիտ և բարձրաբերձ ձիթաստանեաք հրաւէր իմն կարդայ առ ձեզ՝ գալ ժողովել 'ի մարզս գիտութեանց. քանզի այս տունկ բարեբոյս՝ հովանի կացեալ է ցանգ գիտութեաց և աբուեստից, զնաղաղութեան բերեալ զնշանակ, որ այնչափ կարևոր է ոտցա. և անգստին 'ի վաղ ժամանակս յունականն քաղաքականութեան ընդ ձիթենեաւ ամենացուցն քաղաքի որ դայեակն էր իմաստից՝ ծնաւ և աճեաց : Ի քաջալեր ակնկալութիւն մերձ ընդ մերձ պատահելոյ տարեացն բոլորմանց արձակեմ աւասիկ զՁորրորդ զայս ժողով : Այլ կացցէ մնասցէ սա անջնջելի յիշատակաւ յայսմ քաղաքի, յորում բնակուի կալեալ ձեր (աւաղ զի կարի սուղ ինչ ժամանակ), հաճեցայք ոչ անշնորհակալս զսա անուանել : Եւ 'ի վաղեմի մեծափառ վարժոցս[1] յայսոսիկ՝ յորոց մեկնիք 'ի խաղաղութիւն, կայ մնայ ապաքէն և մասն ինչ ձեր. այն իսկ է օրինակ ձեր. յորմէ իտալական մանկտին, որ ընդ հուպ այսրէն գումարեացին, մեծապէս նախանձաւորութեամբ գուն գործեսցեն ընդ հետս շաւղաց ձերոց դիմել յիմաստութիւն :

Ամբոխ ջուրը պոելու գործիք :

Յրրոր կուզես աղտոտ ջուրմը մաքրել, առ ծաղկանոցի[2] պէս հողէ ամանմը, որ յատակին մօտիկ քովընտի ծակեր ունենայ. ասոր մէջ կարգմը խոշորկեկ խիճ[3] լեցուր, անոր վրայ աւելի մանր խիճ դիր, անոր վրայ ալ բաւական թանձրութեամբ մաքուր լուացուած ու զուտ աւազ, անանկ որ մէջը հող չգտնուի. ան աւազին վրայ իրեք չորս բթաչափ ծեծած ածուխ[4] դիր, ու ետքը վրան ջուրը լեցուր, որ աս նիւթերուն մէջէն անցնելով՝ ամանին ծակերէն ուրիշ անօթի մը մէջ կրկաթէ ու կըլլայ մաքուր յստակ ու անհոտ ջուր մը : Այսպիսի ամանմը երբոր չինես, շատ տարիներ կրնաս գործածել : Ածուխը դիւրաւ ծեծելու համար՝ պարկի[5] մէջ կրնայ դրուիլ, որպէս զի փոշին ցրուելով չնեղէ քովինները. ծեծելէն ետքն ալ պէտք է մաղէ անցընել ու այնպէս գործածել :

1 Սրահք համալսարանին :
2 Սոգոը :
3 Զոգբլ Ինոը :
4 Գ-ԷՕՓ-Ը :
5 Զ-Ոլ :

1 Իտալացի :
2 Լուքքա :